

ԵՐԿՈՒ ԳԼՈՒԽ ԴՂԱՄՄԱՊԱՏԱՅԻՅ *)

Խորհրդածութեան մասին.

1) Խորհրդածութիւնը անմահութեան ճանապարհն է, թեթեւամտութիւնը՝ մահուան ճանապարհ: Խորհրդածութեան մէջ արթուն մնացողները երբէք չեն մեռնում. թեթեամիտները և տգէտները նման են մեռեալներին:

2) Ճշմարտութեան ակտիւանները, նրա համար մարտնչողները, որոնք խորհրդածութեան են նուիրուած ամբողջապէս, վայելում են այն, և ուրախանում են ընտիրների ուրախութեամբ:

3) Ներվանային՝ գերազայն երջանկութեան, հասնում են այդ իմաստունները, իրանք իրանց մէջ խորասուզուած, խորհրդածող. նրանք ունեն բուն զօրութիւնը:

4) Անարթատը, սուբբը իր խոհերով և մարտերը գործերով, օրէնքին հետևողը, խորհրդածող և խոնարհը վեր ի վեր կբարձրանան իրանց փառքի մէջ:

5) Հանապազ արթուն, խորհրդածութեան մէջ մնալով, իմաստունը իր համար անմատչելի կղզի է ստեղծում, ուր չե՛ հասնել նրան ո՛չ մի միակընթացութիւն:

6) Անմիտները ունայնին են ձգտում. իմաստունը պահպանում է իր խոհերը, որպէս լաւագոյն գահձ:

7) Մի՛ լինիր անձնատուր ունայն ցնորքներին, սիրոյ կրքերի վայելքներին անձնատուր մի՛ լինիր: Միշտ խորհրդածողները միայն հասնում են անփոփոխելի, յարատե երջանկութեան:

8) Իմաստունը վերից վեր է նայում անմիտների վրա, անգիտութեան կապանքներից ազատուած, իմաստութեան ժայռոտ բարձունքներին հասած. հանգիստ նա նայում է աղմկալից ամբոխի ժխորին, ինչպէ՛ս լեռան կատարին կանդնածը նայում է, մեկուսացած, նրանց վրա, որոնք այնտեղ ցածում, հովաւ մ՛ ծփում են:

*) Դհամմապատա (Dhammapada) նշանակում է «Ճշմարտութեան ուղի». նա, կարելի է ասել, բուդդայականների Աւետարանն է եւրաս աւանդութեան, գրուած է 477 թ. ն. Ք. ծ.: Աւելորդ չենք համարում, նմուշի համար, երկու գլուխ թարգմանել «Արարատ» ընթերցողների համար.

9) Գատարի մարդկանց ամբոխի մէջ խոհերով համակուած, արթուն խոր քնի մէջ ընկղմածներէ մէջ, իմաստունը դէպի հեռուն է ձգտում, նման լաւ (սրբն(թաց) սրարշաւ նժոյգին դաշտի ձիերի երամակի մէջ:

10) Ինդրան խելացիութեամբ, բանականութեամբ հասարակրայետութեան անտուածներէ վրա. ժողովուրդը փառարանում է խելացիութիւնը, իսկ թեթեամտութիւնը ամեն տեղ պակարակուում է:

11) Խորհրդածութեան մէջ վայելք է զգում ճգնաւորը. նա փախչում է թեթեամտութիւնից: Կրակի նման, իմաստունը խորտակում է նրան կաշկանդող բոլոր մարմնական և հոգեկան կապանքները:

12) Խորհրդածութեան մէջ վայելք է զգում ճգնաւորը. նա փախչում է թեթեամտութիւնից: Իմաստունը չի կորցնի ձեռք բերած կատարելիութիւնը, — նա արդէն մօտ է ներկայանալին:

II.

Չարի մասին.

1) Ով իր մօքով դէպի բարին է դառնում, նորան չարը չի մօտենալ. առաքինութիւն արհամարհողը հակամիտ է դէպի չարը:

2) Եթէ մարդ սովոր է չար գործել, թող նա այլ ևս այն չգործի. թող նա չարը այլ ևս չսիրի. չարին հետևում է տանջանքը, տառապանքը:

3) Եթէ մարդ բարի է գործում, թող նա ապագայում ևս այսպէս գործի. թող նա ուրախանայ բարու համար. նրան ուղեկցում է երջանկութիւնը:

4) Չար գործողը բերկրանքի մէջ է, քանի որ չէ հասել նրա չար գործերի պտուղը, բայց երբ կհասնի այդ պտուղը, այն ժամանակ անօրէնութիւն գործողը աշխարայ կտեսնի իր բոլոր չար արարքները:

5) Առաքինին տեսնում է չար օրեր. նրա բարի գործերի պտուղները տակաւին չեն հասել. բայց երանելի կլինի նա, երբ նրա գործերը բարի պտուղներ կտան:

6) Թող մարդ թեթեամտաբար չմտածի չարի մասին, իր օրտի մէջ ասելով. չէ որ նա ինձ չի դիպչել: Զրի ամանը լըցւում է փոքրիկ կաթիլներով. անմիտը ամբողջապէս չարով է լըցւում, փոքր առ փոքր չար գործերով:

7) թող մարդ անհոգ հերպով շմատճի բարւոյ մասին, ստելով իր սրտի մէջ. չէ որ նա ինձ չի մօտենայ: Ասթիւ առ կաթիլ ջուրը պնու՛մ է ամանը, — իմաստունը, անգամ սահաւ առ սահաւ բարի գործերով, ամբողջապէս բարիով է լցոււմ:

8) Որպէս թանկագին ագրանքներ տանող և վատ պաշտպանուած վաճառականը վաճառուսը ճանապարհներից խուսափում է, որպէս կեանքը գնահատող մարդը խուսափում է թունաւոր օձերից, այնպէս էլ դու խուսափի՛ր բոլոր վնասակար, բոլոր մեղաւոր բաներից:

9) Եթէ մարդի ձեռքը չի վերապաւած, նա կարող է օձի թոյնին ձեռք առլ, — առողջ ձեռքին թոյնը վտանգաւոր չէ: միայն նրա համար է չարը անվնաս, ով ինքը չար չի գործում:

10) Ով վերաւորում է անպաշտպանին, մաքուրին, անմեղին, չարը կընկնի այն անմաթի գլխին, որպէս քամու անրաճ փոշին:

11) Նորից մարդիկ վերաբնոււմ են. բարիները բարձունքներն են ելնում, իսկ չարերը խորխորասն են գլորւում. ով ազատ է երկրի, աշխարհի բոլոր ցանկութիւններից, նա կհասնի երանութեան:

12) Ո՛չ երկնքում, ո՛չ ծովի խորքում, ո՛չ լեռների կիրճերում, — ո՛չ մի տեղ ամբողջ աշխարհում մարդ իր մեղքից չէ թաղնուիլ:

13) Ո՛չ երկնքի բարձունքում, ո՛չ ծովերի անդնդում, ո՛չ ժայռերի պատառուածքներում (խոռոչներում), — ո՛չ մի տեղ ամբողջ աշխարհում ապաստան չեն գտնիլ, ուր մահը քեզ չհասնէր, չզար քեզ գտնելու:

Թարգմ. Ա. Աղիզար:

ՆԻԹԵՐ ԳԱԻԹ ԲԷԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ 1)

Մայր Աթոռի Մատենադարանի № 450 (գ. ց. նոր գրչութիւն) կանոնագիրքը պարունակում է իր մէջ՝ ձեռագրի վերջում նաև «Պատմութիւն ինչ ինչ անցից ի Սիւնիսն յեանոց»:

1) Ծանօթ. խմբ. պահում ենք յօդուածի ուղղագրութիւնը: